

Վ 1036

Ա. ԲԵԼՈՒ-ԲԵԿԵԱՆ



Ա Բ Ա Տ



Թ Ի Ց Լ Ի Ս

ՀԵՅՐԱՆԴԱՐ ՑԱՄԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ ՊՈԼԻՏ 7.

1910

891.99
F-43

ՀՀ ԳԱԱ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՊԱՏՐՈՒԹՅՈՒՆ

№ 4.03.2013

Ա. Բ Ե Լ Լ Ո Ւ - Բ Ե Լ Լ Ե Վ Ո Ւ

01 JAN 2009

Կյուշիր 1910թ.,

՚ի բար. Տայախաչով:

10 DEC 2011

891.99

F-43/3

Ս Կ Խ

100/
1916



Պ Ե Լ Ի Ւ
ՀԵԿԱՐԱՄԱՐՔ ՏՈՒՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵՐԻՆ. ՊԱԼԻՑ 7
1910

23987

ԹԵՐՅԱ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՄ ՏԻԼԻՆ Մարիամ Ա. Սենվանեանի

ԹԵՐՅԱ

ԻՐ ՎԱՂԱԹԱՌԱՄ

Տ Ա Ր Ա

ՎԱՅՐԱՄ ԵՒ ԳՈՒՐԳԵՆ

ԶԱՀԱԿԱՑ ԱՆՄՈՈԱՆԱՀԻ ՑԻԾԱՑԱԿԻՆ

Խուրե՞

ԻՐԵՆՑ ՎՃՏԱՑԵԱԼ «ՀԱՅՐԻԿՈ»

Ա.

Աշնանային մութ գիշեր մ'էր. անախորժ և
ցուրտ, առատ անձրև ալ կուգար: Կասես երկինք
վճռած էր հեղեղել ամբողջ աշխարհը: Տեղ-տեղ
տներու լուսամուտներէն կերեար ճրագներու ա-
ղօտ լոյսը. մերթ ընդ մերթ երկինքը կը փայ-
լատակէր, կայծկլտար և այդպիսով խաւարի մը-
թութեան մէջ ընկղմած իրենն ու շինութիւննե-
րը կերեային իրենց իսկութեամբ ու գոյներով:
Կամաց-կամաց շուկաներու և փողոցներու եր-
թևեկութիւնը դադրեցաւ. ամեն ոք շտապեցաւ
պատսպարուելու սաստիկ անձրևէն ու ցրտէն.
թոչուններն անդամ սգուորի նման թագնուեր
էին իրենց բուներու մէջ: Իսկ դուրսը շարունակ
կ'անձրևէր, մարդու ձայն ծպտուն այլ ևս չէր
լսուեր. միայն շուներն էին, որք անդադար կ'ոռ-
նային և դունչերնին անկած դէպի վեր՝ իրենց
տրտունջը կ'արտայայտէին երկնքի դէմ ու տը-
լսուը կը կնձկնձային...

Գիշերուայ այդ խիստ պահուն կ. քաղաքի
մէկ թաղը գտնուած փոքրիկ տան մը մէջ ար-
տասովոր շարժում մը, ոգեռութիւն մը կը նը-
կատուէր: Եյդ տունը կը գտնուէր քաղաքին ծայ-
րը, խուլ անկիւն մը, ուր մարդ մը չէր համա-

ձայնիր—եթէ փոքր ի շատէ կարողութեան տէր ըլլար—հոն բնակուելու. վասնզի տան թէ արտաքինը և թէ ներքինը տեսնողը շուտ կը համոզուէր, որ ադտեղ միայն աղքատ մարդոց վայել էր մնալ. այնքան հին ու անշուք էր շինութիւնը:

Սակայն, ընթերթնդ, գուն չըխորշիս ադ փոքրիկ տնակէն, այլ եկ միասին մտնենք ներսը, տեսնենք հոն միկ կը բնակի, ի՞նչ իրարանցում, շարժում տեղի ունի. ակնարկ մը ձգենք մեր շուրջը, աղէկ մը քննենք, զննենք զանոնք ու ապա մեր կարծիքն կազմենք նոցա մասին։

Առաջին սենեակը փոքրիկ, շատ փոքրիկ օդամէր, ուր հաւաքուած էին քսանէն-քսանը հընդի չափ երիտասարդներ ամեն դասակարգէ. առաստաղը շատ ցածր ու միջոցը խիստ նեղ։ Սենեկին մէջ՝ պատերու տակ շարուած են քանի մը աթոռներ, անկիւն մը յատկացուած է գրադարանի, որու վրայ դարսած են քանի մի տասնեակ հայերէն գիրքեր. մէջ տեղ սեղան մը, վըրան լապտերը վառ, քանի մը հայերէն պարբերական թերթեր, թանաքաման և գրիչ մը քովը—ահա ադ սենեկին մէջ գտնուած տանտիրոջ կարողութիւնը։ Միւս սենեակը ննջարանի կը ծառայէ. հոն տանտիրոջ մանը տղաքը աչուընին խփած՝ անոյշ կը քնեն իրենց մօր գրկին մէջ... Երբորդ սենեակը կը ծառայէր իբրև խոհանոց, ուր տանտիրոջ պատաւ մայրը. իւր սի-

ռելի հիւրերու համար սուրճ կը պատրաստէր։

Առաջին ակնարկէն՝ պարզ կերևար, որ ադ յարկին տակ ոչ մի կեր ու խում չկար, այնուամենայիւ ադ անշուք տան մէջ գտնուածներու երեսին կարելի էր նկատել ահսահման ուրախութեան ու գոհութեան նշաններ. ամենեքեան երկ-երկու, երեք-երեք և աւելի խմբուած՝ ումանք նստած, ումանք կայնած շրջան կազմած կասէին, կը խօսէին, կը վիճաբանէին, կը դատէին. նոյնիսկ մէջելնին ուրախ երգողներ ալ կային։

—Տղաք, խօսքը տանտիրոջն է, վերջապէս ընդհատելով բոլորին՝ մէջ մտաւ երիտասարդ մը, որ բոլոր ժամանակ լուռ կեցած էր, —եթէ նա թոյլ կուտայ՝ մենք կը ցըուինք մեր տները... չեմ կարծեր թէ աս սաստիկ մթին ու անձրեին Սարգիս քաջութիւն ունենայ հոս դալու։

—Նա, նա, նա,—լսուեցաւ ամեն կողմէ, —նա երբէք, մենք հաւատացած ենք, չի դաւաճանի իր գաղափարներուն, իր սկզբունքին։

—Լսեցէք, եղբարք, —մէջ մտաւ տանտէրը, որ 24—25 տարին նոր բոլորած, միջահասակ, առողջ ու վայելուչ կազմուածքով, սեսկ յօնքերով ու բեխերով վառվուն երիտասարդ մէր, հագած սե բաճկոն. —ես միանգամայն կը զարմանամ ձեր թերահաւատութեան վրայ, չեմ գիտեր խողամ թէ ցաւիմ... վասնզի բաւական է որ ադ մարդը ժամ մը կամ քանի մը րոպէ ձեղ-

մէ հեռանայ—յայնժամ արդէն ամեն բան վերջացած է... Զէ, աղպէս մի ընէք. քիչ մ'ալ ներողամիտ գտնուեցէք դէպի աղ մարդը. չէ՞ որ մարդ մը չի կարող մէկ ձեռքով երկու ձմերուկ բռնել, իսկ Սարգիս կը վստահանայ նոյն իսկ ատիկայ ընելու... Ա՛լ ինչ կուզէք ադորմէ, ջանըմ. ինքն ըսաւ ժամի 8-ին կուգամ, եղաւ որ դուք դեռ անձրես չըսկսած՝ շտապեցիք հոս, իսկ ան երեխ կըսպասէ անձրեխ դադարելուն՝ որ գայ: Յամենայն դէպս ես կասկած չունիմ, որ Սարգիս իր տուած խօսքը չը յարգէ և չը գայ:

—Կեցցէ մեր տանտէրը, —պոռացին հոս-հոն. —յարգելով մեր սիրելի Պետօյի խնդիրը՝ կ'որոշենք սպասել Սարգսին:

Տանտէրը, Պէտօն, նոր էր վերջացուցած իր համառօտ ճառը, երբ անյայտ մէկը դրսի դուռը ուժգնութեամբ կը բաղնէր:

—Տէր Աստուած, —խոհանոցէն դուրս վագելով արտասանեց պառաւ տանտիկինը, ճառախօսին մայրը. —Ասիկա ծանօթ մարդու բաղիսում չէ. ո գիտէ, թերես մենք ամենքս ալ հոս մատնուած ենք... Պէտօ. ջան, որդիս, քեզ չեմ թողուր դուռը բանալու. թող չարագործները կայնին, կորսուին...

—Եկէք ճրագը մարենք, —աւելցուց ներկայ եղողներէն մէկը. —մայրիկը աղէկ կըսէ, իմ սիրտս ալ կը վկայէ, որ աս բաղիսումը բարեկամի բաղիսում չէ. այժմեան ժամանակը շատ փոխուած է, մէկ

անկեղծ մարդուն ինն մատնիչ կուգայ եթէ ըսեմ չափազանցութիւն ըրած չեմ ըլլար. նոյն իսկ այսօր ոստիկան մը մեզի հոս գալերնիս նըկատեց:

—Աղամ, «օլաջագայ չարայ եօք» կըսէ անօրէն տաճիկը. ինչ ըլլալու է կըլլայ, —յարեց երիտասարդ մը:

—Թող տուէք աղպիսի յուսահատական խօսքերը, ջանմ, —մէջ մտաւ Պէտօն, —այսուհետեւ պէտք չէ վախնալ, մեր նպատակն ալ իսկապէս այն է որ օր մը, պատրաստ, զինեալ, դէմ առ դէմ կայնենք մեր ոխերիմ թշնամու առջև. ուրեմն բանանք տեսնանք ովկ է այսպահուն եկած, գուցէ՝ մեր սպասած ընկերն է:

—Ծղաք, —դրսէն լսուեցաւ Սարգսի պարզու որոշ ձայնը, —մեռայ այս ցրտուն ու անձրեւուն. շուտ ըրէք, դուռը բացէք... Ծնաշէններու լեղին պատռեցաւ, երբ դռան բաղխում լսեցին:

—Հրամմեցէք, հրամմեցէք. ծօ, այդ ում վախկոտ կանուանես, հ՞ը. միթէ մարդ մը, երբ կը ձեռնարկէ գործ մը յառաջ տանելու, — անոր վատ հետեանքէն պիտի վախնայ... Այն ատեն ալ ովկ կը վստահանայ գործի ձեռնարկելու:

—Հա, հա, հա... վայ ես ձեզի ինչ զրուցեմ. ո գիտէ, թերես դուք յուսահատած ալ ըլլաք; որ ես ուշացայ ժամու մը չափ սաստիկ անձրեւուն պատճառով:

—Ծօ, հարիֆ, —դարձաւ Սարգիս խնդիրով

դէպի կարճահասակ, խաժակն, գորշագոյն զգեստ հազած երիտասարդ մը, որ անկիւն մը կայնած, քերանը բաց ասոր անոր երեսին կը նայէր,— ծօ, քեզի հետ եմ, շաշխուն, բեր կուրծքդ քննեմ, երևի սաստիկ թըլթիվայ կը...

—Ծօ, դժւն ես,—կոկորդին մէջ կլկլացնելով պատասխանեց կարճահասակ մարդը,— վալլահի ձեզպէս ոչ մահէ, ոչ բանտարկութենէ, ոչ ալ մատնուելէ կը վախնամ. ով կը կասկածէ ըստածներուս, թող փորձէ գործի ժամանակ իմ կործութիւն և ապա զիս վախկոտ անուանէ:

—Մեռնիմ քեզի, Սարգիս ջան, — պառաւտանտիկինը միամտաբար արտասանեց,— շիտակ կըսես, մենք ամենքս ալ շատ վախցանք. սիրուայնպէս կը զարնէ օր...

—Մայրիկ, դուն գնան գործիդ, — ասաց Պէտօն՝ — մի խառնուիր մեր գործին, ինչէն պիտի վախնայինք, մեզ պիտ ուտէին, հա:

Պառաւը հնազանդելով որդունկատողութեանը, մտաւ խոհանոց և քանի մը ըուպէ ետքը հին, մաշած մատուցարանի վրայ շարած սուրճի լիքը թասեր՝ ներս բերեց ու դրեց սեղանին վրայ:

—Տէ, տղաք, հրամմեցէք, անուշըրէք, — դարձաւ պառաւը հիւրերուն, — և մէկ-մէկ հրաւիրեց անոնց մօտենալ սեղանին:

— «Ամագդ երուսաղէմ», «հոգիդ արքայութիւն», անա-ջան, առտեղէ, անտեղէ շնորհակա-

լութիւն ըրին մեր երիտասարդներ ու մօտեցան սեղանին:

—Ես ի՞նչ գիտնամ, որդիքս, գիւա նոր սերունդ ենք, կըսէք, 19-րդ դարու զաւակներ ենք կըսէք, շատ բանէր կըսէք, չեմ հասկնար ի՞նչ կըսէք, այդպիսի խորունկ, խորժնկ բաներ չեմ հասկնար... Ամմա, տեսէք, ես հասարակ պառաւ միմ, բայց ձեզնէ աւելի աշխարհ տեսած, փորձուած... «Ճա չափեցէք մէկ կարեցէք», կըսէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս: Տէ, մի պաղեցնէք, վայելեցէք, եթէ կուզէք, մէկ մէկ բաժակ ևս բերեմ:

—Շնորհակալ ենք, մայրիկ ջան, հոգիդ արքայութիւն. մեր խնդիրքն քեզնէ սա է միայն՝ որ աղօթես առ Աստուած մեր սուրբ գործին յաջողութեան... Գիտես մայրիկ, մենք 19-րդ դարու ենք, ձեր դար վաղնւց անցեր է, այժմ մերըն է ապրելու և գործելու դարը...—խօսեց Արտաւազդ լուրջ դէմք մը առնելով:

Սուրճը վայելեցին մեր երիտասարդներ և անմիջապէս տեղերէն վեր կենալով՝ իրենց որդիական սրտագին շնորհակալութիւննին յայտնեցին հիւրասէր պառաւին:

Բ.

Վերջը Սարգիս, որ 22 տարին նոր բոլորած, սիրուն պոյով ու կազմուածքով պատանի մըն

էր, դարձաւ իր ընկերներուն մօտաւորապէս սա ճառով.

«Այժմ, եղբարք, ամենքի բռնեցէք տեղերնիդ, ամեն բոպէ մեզի համար շատ թանկ է. թէկ ես սաստիկ թրջուած եմ անձրևին տակ, նոյն իսկ կը դողամ, բայց և այնպէս ՚ի նկատի առնելով մեր գործին կարևորութիւնն ու նշանակութիւնը, հարկ կը համարիմ քանի մը խօսքերով բանալ մեր ժողովը, և թերևս մեր տարբեր տարբեր կարծիքնին արտայայտելով՝ այս երեկոյ կարող լլանք որոշ եղբակացութեան մը դալ: Մենք պէտք է դառնանք դարձեալ երեկուան խնդրին: Չեզ քաջ յայտնի է որ ամենիս յարգելի Պէտօն իր երեկուան ճառին մէջ ամենատխուր գոյներով նկարագրեց մեզի մեր տարբաղդ չայրենիքի դրութիւնը, չայրենիքի, որը այնքան ողբալի, վճռական վիճակի մէջ չէ եղած անցեալին մէջ, որքան ներկայիս Եթէ չեմ սխալիր, երէկ Պէտօն ներկայացնելով մեր սիրուն հայրենիքի այժմեան քստմնելի դրութիւնը, ՚ի միջի այլոց հրաւիրեց մեր ուշադրութիւն այն պարագայի վրայ, որ ներկայիս քիւրդ «համիդիէ» կոչուած բաշիբօղուկ զօրքը՝ քիւրդ և թիւրք հրսակներու հետ միացած՝ ասպատակելով Մայր—Հայաստան, մեր բազմաչարչար հայրենիք քար ու քանդ կընեն, անխնայ կը կոտորեն ժողովուրդը, կայրեն, կը հրդեհեն տներ, ամբողջ արտեր, կը փառացունեն ամեն բան, մոխիրէ կոյտեր դարձ-

նելով մեր երէկուան շէն գիւղերն ու աւաններ, ու մեր անմեղ քոյրերը լլկելով՝ կը լեցնեն իրենց հարէմներ...

Կար ժամանակ—և աղ ժամանակը մեզմէ շատ հեռու չէ—երբ ոչ միայն մեր ծերունիներ, այլ նոյնիսկ երիտասարդութիւն այն ցաւալի, եթէ չըսենք անտրամաբան, գաղափարն ունէին թէ՝ եթէ թշնամիդ մէկ երեսիդ ապտակ գարնէ, միւսն ալ դէմ տուր: Այժմ, օրհնեալ է Աստուած, մենք արդէն հասած ենք ինքնաճանաչութեան այն աստիճանին, որ կը հասկընանք թէ այդպիսի հեղութիւնով ու ներողամտութիւնով ոչ միայն չենք կընար մեղմացնել կամ՝ առաւել լաւ է ըսել, ՚ի գութ շարժել մեր դարաւոր անհաշտ թշնամու սիրտը, այլ ընդհակառակը օրէց օր նա աւելի ևս կը կատաղի, կը բորբոքուի մեր դէմ, վասնզի նոքա իսլամի զաւակներ, մեր ներողամտութիւնն վախկոտութեան տեղ ընդունելով՝ կը կարծեն թէ մեր ազգ անբան անսառւններէ կը բաղկանայ և ստեղծուած է ծառայելու միայն նոցահաճոյքին ու քմքին... Ո՞չ, —կը պատախանեմ ես, —այժմեան ժամանակ մենք շատ բան ուսանք մեր անցեալ դառն սխալներէ, փորձանքներէ. մենք ներկայիս չպէտք է բառացի հետեւենք ոչ թէ Աւետարանի այդ վեհ պատուէրին, այլ «ակն ընդ ական և ատամն ընդ ատաման» ին:

Որովհետև թշնամին այլ կերպ չի հասկանար իրաւունք և արդարութիւն, եւ գիտէք, տը-

ղաք, ինչու ես առ այժմ վաղաժամ՝ կը համարիմ առաջին վեհ և մարդասէր խորհրդին հետեւելու. — որովհետև, ինչպէս ըսի, փորձը, այս, դառն փորձը, մեզի հասցուց այն ցաւալի եղբակացութեան, որ մարդ մը կամ ազգ մը ներկայիս մէջ, փորձութեան այս դարին մէջ, երբ ամեն ազգ իր գոյութիւն ամուր հիմքերու վրայ զնելու կամ պահպանելու համար կը դիմէ հազար ու մի ամենաստոր, չըսենք քստմնելի, բարբարոսական միջոցի, — այն է՝ պարբերաբար ոչնչացնել ուրիշ ինկած, ուժասպառ եղած ազգեր ու ցեղեր, կամ ձուլելով զանոնք՝ ի մի իրենց հետ և այդպիսով մշտական տէր դառնալ նոցա և անոնց հայրենի երկիրներուն... Մեր ազգըն ար, շատերու հման, իբրև քրիստոնեայ ազգ, պահ մի անձնատուր ըլլալով վերացական գաղափարներու, դադարեց գործելէ առժամանակ մի իր երկրաւոր, աշխարհային ապահովութեան, գոյութեան ու բարօրութեան համար, որ և դարձրեց զնա գերի և ստրուկ իրմէ աւելի զօրեղ ազգերու... Մեր ազգի գոյութիւնը դարձաւ այդպիսով շատ խախուտ, այնքան խախուտ, ինչպէս Աւետարանի մէջ յիշատակուած աւազի վըրայ շինուած շինութիւն, որ ամուր հիմքերու վրայ շինուած չըլլալով՝ բնականաբար զոհ պիտի ըլլար յորդ անձրեին, հեղեղին...

Մարդս իր ծնած օրուանէ գոյութեան կը սուլին մէջ է: «Սահմանք քաջաց գէնք իւրեանց,

կըսէ հոն առածը: Շատ տկար ու փոքը ազգեր ու ցեղեր չեղած տեղէն յարութիւն առան, ծընան, մեծցան, հզօրեցան և տիրեցին միւս ազգերուն, որք երէկ իրենց անունով միայն սարսափի կ'ազդէին այս մանր-մունր ինքն ըստինքեան ոչնչութիւն կազմող ցեղերուն: Մըթէ հարկ է հոս օրինակներ բերել ընդհանուր պատմութենէ, քանի որ ամենքդ ալ գեռ տղայ ժամանակնիւ կարդացած էք զայն դպրոցական նստարաններու վրայ: Եւ գիտէք, սիրելիք, ինչ է պատճառ, որ երէկուան հզօրը, տէրը, այսօր ստրուկ, գերի, հպատակ կը դառնայ իր երէկուայ ծառային: — Պատճառը շատ պարզ է և բնական. այսինքն ով որ այս աշխարհին մէջ կը դադարէ մըցելէ ուրիշին հետ, նա վերջ ՚ի վերջոյ վերջինիս (մըցողին) զոհն ու յաւիտենական ծառան կը դառնայ... Կարճեմ խօսքս: Մեր տարաբաղդ Հայրենիք՝ Մայր-Հայաստան, ահա քանի մի հարիւր տարիներէ ՚ի վեր մոոցած է իր գոյութեան մասին, ոչ ոքի հետ չէր մըցեր իր գոյութիւնն պահպանելու համար, այլ գոհ կը մնար իր վիճակէն, որ իր ապօրէն տիրոջ սեղանի փշրունքներէ իրեն ևս բաժին կը հանուէր: Նա երկար քնացած կամ անուշ կը նիրհէր, այնքան անըզգայ դարձած էր, որ չէր նկատեր ու չէր զգարթէ ինչպէս ոսոխ իր գլխու վերև կայնած՝ յաւիտենական մահուան վճիռ կը կամի կարդալ անոր գլխուն...

Այժմ, եղբարք, ամենքդ ալ գիտէք արդէն,
որ մեր ազգի նոր սերունդ, երիտասարդութիւն,
որ աւելի թարմ ոյժ կը կազմէ քան հին, արդէն
ծերացած, իր դարն անցուցած, իր ոյժերն վատ-
նած սերունդ, արթնցած է և գուշակելով իր մօ-
տալուտ, վաղաժամ մահը, կամի՝ քանի իր ե-
րակներուն մէջ դեռ չէ սառած արիւնը, քանի
որ կրնայ դիմադրել այդ տեսակ մահերու, այն,
մեր նոր սերունդ արթնցած մահաբեր նիրհէ, այժմ
կամի ապրել, այն ալ երկար դարեր... Եւ ահա
նոյն իսկ այդ նպատակով է, որ մենք մեր խոր-
հրդածութեան առարկայ դարձուցեր ենք այդ
մահու և կենաց խնդրիներ։ Վերջ կուտամ ճա-
ռիս յայտնելով, որ մեր կարծիքնին արտայայ-
տելէ ետքը՝ այս գիշերուան նիստին, մենք մեր
վերջնական որոշման կը յանդինք և կը դիմենք
աւելի դրական միջոցներու՝ մեր հայրենիքին ու
ազգին սպասող վերահաս մահուան առաջն առ-
նելու։

—Ապրիս, Սարգիս-ջան, մենք միանգամայն
համամիտ ենք քեզի հետ։

Սարգիս վերջացուց իր ճառը և ներողութիւն
խնդրեց ունկնդիրներէ՝ որ թերես շատ երկար
ըլլալուն պատճառաւ, նոցա տաղտկութիւն պատ-
ճառած ըլլայ, ու իր տեղը նստեցաւ։

—Թոյլ տուէք, եղբարք, քանի մը խօսք ը-
սելու մեր յարգելի ընկեր Սարգսի ճառին առի-
թով, —այսպէս սկսաւ իր ճառ մեր ընթերցող-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

7/11 1922

Ա. ԱՅԱԽՈՎԻ Ա. ԱՅԱԽՈՎԻ

Ներուն արդէն շայտնի գոյաց մարդը, որու ա-
նունն էր Յուսիկ։ Երէկ երեկոյեան մենք երկար
զբաղելով մեր թշուառ Հայրենիքին դարման մը
ընելու, օրհասական դրութենէ ազատելու խնդ-
րով, հերթով արտայայտեցինք մեր տարբեր-
տարբեր կարծիքները մեզ ամիսներէ՝ ի վեր զբա-
ղցնող խնդրին նկատմամբ և վերջը մեր հիւրա-
սէր տանտէր Պետօն, որու յարկին տակ ահա ամ-
բողջ երեք տարի է, ինչ զբական երեկոյթներ
կը սարքուին, ժողովներ կը լլան, վերջապէս այդ
բոլորի հետևանք եղաւ այն որ՝ առկէ քանի մ՝ ա-
միս առաջ իր նախաձեռնութեամբ մեր քաղաքին
մէջ բացուեց մեր անդրանիկ ազգային հաստա-
տութիւնը «Աղքատախնամ ընկերութիւնը» յար-
գելով մեր խնդրի, կանգնելով իր տեղէն ար-
տասանեց մեծ աշխուժութեամբ՝ սովորական գե-
ղաժամիտ գէմքով ու շրթունքներով՝ իր իմաս-
տալից ու ուրոյն ճառը։ Սակայն ցաւելով պի-
տի յարեմ, որ ճառին վերջը պատիւ չունեցանք
լսելու—որոշ եղբակացութեան մը յանդելու հա-
մար,—վասնզի ժամանակն արդէն անցած էր, և
աքաղաղներ իրենց սովորական ծուղրուղիով կ'ա-
ւետէին մեզի թէ՝ արդէն ժամանակ է ցրուելու
մեր տներ... Եւ մենք ստիպուած եղանք հեռա-
նալու այստեղէն՝ դեռ չը լսած ճառախօսին վեր-
ջաբանը։ Այժմ, եղբարք, քանի որ այսօրուան
նիստ նախընթացին շարունակութիւնն է, ցան-
կալի է, որ Պէտօ արտասանէ իր ճառին վերջա-

բան, ըստ որում մեզի համար, անտարակոյս,
ունի մեծ նշանակութիւն:

—Ապրեմ, կօլօտ մարդ,—ձայնակցեցին ա-
մենեքեան միաձայն.—ճիշտ որ խելքը մարդուս
պոյին մէջը չէ, այլ զլսուն:

—Այս, կը պնդեմ ես ալ. թէև կարճ՝ բայց
խելօք մարդ եմ, պատասխանեց Յուսիկ ինքնա-
վատահութեամբ—ի՞նչ առաւելութիւն ունին, օ-
րինակ, պոյով մարդեր իմ վրայ. ես գիտեմ շատ
պոյովներ, որոնց յիմարութիւն այն աստիճանի
էր հասեր, որ ժողովուրդը զանոնք «Ուզուն-ախ-
մախ» կ'անուանէ... ես բնաւ չէի ցանկայ այդ-
պիսի պոյով մարդ մը ըլլալ:

—Կեցցես տղայ, ի՞նչպէս խելօք-խելօք խօս-
քեր կը զրցիս. Աստուած է վկայ, խելքդ Աս-
տուածատուր է,—կատակներ ըրին ասդից, ան-
դից:

—Ուրեմն՝ յարգելով մեր պատուական եղ-
բայր Յուսիկի խնդիրը, մեր կողմէ կը խնդրենք
Պէտօյին ամբողջացունել երէկւան իր ճառ:

Այդ պահուն ննջարանին մէջ մանուկ մը
կանչեց իր «ծուլլուղու»ն և պառաւ տանտիկի-
նը զարթեցուց: Հարկ է հոս միջանկեալ ըսելու,
որ ուսուցիչ Պետօ դեռ ամուրի էր, իսկ իր եղ-
բայրներէ մին ամուսնացած էր և արդէն զա-
ւակների տէր: Պառաւ զարթնելուն պէս զարթե-
ցուց նաև լացող մանկան մայրը ծիծ տալու, ու-
ինք (հազնելով իր շորեր)՝ մտաւ դահլիճ տեսնա-

լու թէ՝ ինչ կընեն իր որդին ու հիւրեր:

—Ո՛րդիք, ախր չէ որ դուք մեղք էք է,
քանի գիշեր է բնաւ չէք քնանար. այդքան ալ
երկար, երկար մտածել կըլլայ, որ դուք կընէք...
կը մեղքանամ ձեզի: Աստուած է վկայ, քիչ մ'ալ
հանգստացէք, ուրիշ ուրախ բաներու վրայ մտա-
ծեցէք. չէ որ ձեր առողջութիւն այդպիսով կը
վատնէք: Կուզէք ընթրիք պատրաստեմ: Շնոր-
հակալ ենք, մայրիկ-ջան, կը խնդրենք որ մեր
գործին չը խառնուիս, —պատասխանեցին երի-
տասարդներ. —հաց մենք չենք ուզեր, դուն գնա,
հանդիսա քնիր:

—Զեզի համար կըսեմ, որդիքս, ափսոս էք
ձեր աշխատելով բան մը շըլլար, Աստուած պէտք
է յաջողի. Կուզես հազար տարի աշխատէ, որ չի
յաջողի...

—Մայրիկ-ջան, —խօսեց Պէտօ, դառնալով
դէպի իր գորովագութ մայրը.—մ'այրիկ, ախր
չէ որ ձեր ժամանակը, դարը վաղուց անցեր է.
կար ժամանակ, իրաւ է, երբ աշխարհային ա-
մեն պատահար, դէպի, փորձանք, դժբաղդու-
թիւն և այն, որոնք օտարներէն կուզային մեր
ազգին գլխուն, խոնարհելով ձեր ձեռքով պատ-
րաստած դառն ճակատագրի առջև՝ դուք ամէն
բան կը վերագրէիր երկնքին և այդպիսի դառն
ժամանակներուն մէջ գոհ էիք ձեր ողբալի վի-
ճակէն: Այժմ, անցեր են այն երաննելի ժամա-
նակներ, երբ մարդիք այդպէս էին համոզուած

ու այդպէս կը հասկընային. ներկայ ժամանակը, դարը փոխուեր է, բնականաբար փոխուեր են նաև մարդոց կամ ազգերի գաղափարները. մարդս ժամանակին կը սպասէ և անոր ոգու հետ կ'ընթանայ յառաջ, իսկ ժամանակ ոչ մի բանի չի սպասեր: Մեր խնդիրքն քեզնէ սա է միայն, որ քո արդար բերնով աղաչես առ Աստուած մեր գործին յաջողութիւն:

—Աստուած օրհնէ զձեզ. ես ի՞նչ գիտեմ, որդիք. «Տաս չափեցէք մէկ կտրեցէք», կըսէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս: Կ'օրհնեմ զՁեզ. միայն զգոյշ եղէք, շիտակ կըսէք, ժամանակը փոխուեր է, առաջ այդպիսի բաներ չկար...

—Հոգուդ արքայութիւն, շնորհակալ ենք, —պատասխանեցին երիտասարդք:

—Մեռնիմ ոտներուդ, թէ քաղցած էք, շիտակ ըսէք, պատրաստութիւն տեսնամ:

—Թէկ քաղցած ենք, բայց ժամանակ չունինք ընթրելու, ՚իզուր նեղութիւն մի քաշեր:

Պառաւը գլուխ թափ տալով, կորացած մէջը քիչ մը շտկելով՝ կրկին մտաւ ննջարան, գ.

Պէտօ տրտասանեց իր ճառին վերջաբանը մօտաւորապէս այսպէս. «Յարգոյ եղբարք, երէկ գիշեր ես խօսեցայ ձեզի հետ Հայկական խընդրոյն մասին, սակայն ցաւելով պիտի զեկուցանեմ ձեզի, որ այնքան զգացուած խօսեցայ վերջը, որ թոյլ տուի ինձի ձեր զգայուն սրտերը

շարժելու այնպէս, որ ինձ հետ ամենքդ ալ լացիք... է՞ն, աւելորդ է այդպէս յուզուելը, այժմ ազգը մեզմէ ոչ թէ ողբեր, լաց ու կոծ կը պահանջէ, այլ դրական լուրջ գործեր... Եւ յիրաւի, եթէ մի փոքր լուրջ կերպով վերաբերուինք դէպի մեր ազգային խնդիրը—«Լինել թէ, չլինել»—ը կամ՝ առաւել լաւ է ըսել, «մահ կամ պատութիւն մեր ազգին» խնդիրը, սոսկալով պիտի խոսափանենք, որ մեր ազգի մնացորդներն իրենց բուն հայրենիքին մէջ վերին աստիճանի յուսահատ վիճակի մէջ կը գանուին. չափազանցութիւն ըրած չեմ ըլլար, եթէ ըսեմ ամբոջ Հայաստան աշխարհը՝ այժմ գրեթէ ամբողջովին աւերեալ և հրդեհուած՝ ամենասողալի տեսարան մը կը ներկայացնէ. թշուառ մնացորդներն անդադար զիմումներ կընեն մարդասէր Եւրոպիոյ—փրկել իրենց անօրէն Տաճկի ճիրաններէն։ Բայց, աւաղ, նոքա ամեն անգամ կարժանանան օգնութեան փոխարէն միայն սա «Եղբայրականմարդասիրական - ցաւակցական» խօսքերուն.—Թիչ մ'ալ համբերեցէք, կը մտածենք, բան մը կընենք... Եւ գիտէք, եղբարք, այդ «օրօր»—ը մեր գլխուն ինչնե կը կարդան, —որպէսզի մեր առանց այն ալ ջարդ ու փշուր եղած, յուսահատած ազգի մնացորդներն վերջին յուսահատութեան մէջ իյնալով՝ մոռնան իրենց Հայրենիք, ուրանան իրենց պապերու սուրբ արիւնով պաշտպանած և մեզ իրք աւանդ թողած սիրուն Հա-

յաստան, ուրանան Լուսաւորչայ սուրբ հաւատը, եկեղեցին, կրօնը, միով քանիւ այն ամեն, ինչ որ մեր ազգին համար շատ թանկ է, պաշտելի է, և ինքնայօժար կերպով իյնան բռնաւորի գիրկը... Ապա թէ ոչ ի՞նչ պատճառ ունին նոքա այսքան ձգձգելու մեր ազգային խնդիրը, խնդիր մը որ այնքան ալ բարդ չէ, ինչպէս կը կարծուի: Միայն Եւրոպիոյ կը պակսի բարի ցանկութիւն և կամքի ոյժ, —և այն ատեն թիւքիա՝ առանց կաթիլ մը արիւն թափել տալու՝ կը հարկադրուի բարենորոգումներ մտցնել Հայաստանի մէջ և վերջ տալ իր քստմնելի ծրագրին— ժայ ազգը իր հայրենիքին մէջ որոշ ծրագրով կոտորել, բնաջինջ ընել»...

Ահա թէ ի՞նչ կըսէ հոչակաւոր բանաստեղծներէն մին՝ Գամառ-Քաթիպայ:

Կեցցէ Հայաստան, որ երազական
կարծում են ծերերն. իրօք չէ այդպէս.—
Մեր հայրենիքն դեռ չէ չուարական,
թանի որ ունի քաջ որդիք մեզ պէս:
Բաւ է, օտարին շատ ծառայեցինք,
Ըստըրկի վիճակն չէ յաւերժական,
Ազատութեան գինն մենք քաջ սերտեցինք

Ել չենք հաւատայ օտարի խոստմանց

Միանգամայն ճիշտ կըսէ բանաստեղծը, օտարներէ չիք մեզի օգնութիւն կամ փրկութիւն։ մենք ինքներս՝ մեր ոյժերը մեզի վրայ դրած՝

պիտի հոգանք, դարմանենք մեր ցաւեր, դարդեր, վէրքեր... Ուրեմն եկէք, յարգոյ եղբարք, նոյն ինկայս հանդիսաւոր պահուն՝ ձեռք ձեռքի տուած՝ ուխտենք մեր պատուվերքէք չը դաւաճանել միեւանց, մեր չնչին ոյժերով նետուենք պատերազմի դաշտ. մեր կարմիր արիւնով ցոյց տանք մեր ապօրէն տէր Տաճկին ու մարդասէր քրիստոնեայ Եւրոպային մեր գոյութիւն. գուցէ յայնժամ լուսաւոր Եւրոպա՝ ամօթահար իր վարմունքէն՝ ի գութ շարժի և՝ ի միտքերելով ողորմած Նազովրեցու առակե՝ իր ձեռքն մեկնէ դէպի անկեալ հայ ազգը... Ուխտենք մեր աւերակ դարձած Հայրենիքի և Ազգի պատուվ, մեր նահանատակ պապերու սուրբ շիրիմներով, պատույ ազատութեան գրօշը պարզելով կոռւել մինչև մեր վերջին շունչը փչելը— ձեռք բերել կրկին մեր սիրելի Հայրենիքի պատութիւնը, կամ մեռնել պատուաբեր մահով... որ դարձեալ երջանկութիւն կը համարինք պառկել մեր սիրելեաց ոսկրոտիներու քով, ուր միայն է մեր կեանքն ու հանգիստ: Ինչու ենք մեր ձեռքեր ծալեր մեր կուրծքին մնացեր, քանի որ աւերեալ Հայրենիք մեզ կը կանչէ փրկել իրեն և իր հաւատարիմ զաւակներ գազանաբարոյ թիւրք և քուրդ հրոսակներէ, որք անդադար ասպատակելով մեր խեղճուկ Հայրենիք՝ կաւրեն, կը հրդեհէն, կը վիչացուցեն ամեն բան, և ժողովուրդը սրի անցունելով՝ իրենց պիղծ հարեմներ՝ կը լեցունեն մեր անմեղ քոյրերով...

Դառնանք դէպի մեր սիրտն ու հոգին եղող Հայրենիքն —Մայր-Հայաստան, ով հայ եղբայրներ... Այսօր մեր արիւնաներկ Հայրենիքն մեզ կը հրաւիրէ վրկել իրեն. այսօր մեր արիւնակիցներու մերկ ու քաղցած և սարսափահար թշրուառ զաւակունքն օտարներուն դռներու առջև կայնած և աչքերնին յառած՝ հաց, հաց, կաղաղակեն. բացի մեր եղբայրական օգնութենէ չի՞ք մեր Ազգին ու Հայրենիքին ոչ մխիթար, ոչ յոյս և ոչ ալ ակնկալութիւն։ Եւ եթէ այսօր մենք ալ մեր օգնութիւն զլանանք, մեր տարաբաղդ Հայրենիքին մէջ մնացած ընտանեաց թշրուառ մնացորդներն պիտի զոհ երթան արիւնարբու քիւրդ հրոսակներու և թիւրք կանոնաւոր զօրքերուն, որոնց, ինչպէս երէկ ալ ըսի, բարձրագոյն հրաման տրուած է՝ իսպառ բնաջինջ ընել հայ ազգը իր հայրենիքին մէջ, —յայնժամ իրենց արդար ձայնի դատաստանն կը ծանրանայ մեր՝ հայ երիտասարդութեան վրայ և պատմութեան էջերուն բաժին կըլլայ դատապարտել գանոնք։

Եւ այդպէս՝ ահա ձեզ սուրը (հանելով պատեանէ կը դնէ սեղանին վրայ գտնուած Աւետարանի քով) և Քրիստոսի սուրը Աւետարան Թող զօրավիգ ըլլան. եկէք, այժմ ձեռ ձեռքի տուած՝ ուխտենք սուրք Աւետարանին ու սրին վրայ, մեր միւս բանաստեղծի (Բաֆֆի) սատողերով։ —

«Ո՞վ իմ Հայաստան, սիրուն հայրենիք, Հայկի և Արամայ երկիր գեղեցիկ, Թող քաջքն Արտաւազդայ ինձ կորուսանեն, Թէ ես մոռանամ քո սէրը քաղցրիկ։

Թող իմ բազուկս չորանայ իսպառ, Թող լեզուս լոռուի, չըխօսի մի բառ, Երբ պատերազմում, քո թշնամու դէմ, Զը զոհեմ արիւնս քո սիրոյ համար։

Թող իմ աչքերը կուրանան շուտով, Երբ քեզ ես նայեմ Վասակի սրտով, Թող իմ ականջներ իսպառ խըլանան, Երբ չարիքդ լսեմ, մնամ ես անվրդով։

Բոլոր ներկայ գտնուած երիտասարդներն վերին աստիճանի յուզուած էին. ոմանք կուլային, բարձրածայն կը հեկեկային, ոմանք ալ իրենց աչքերէ աղի արցունք թափելով՝ խոնարհած էին Աւետարանի առջև, ո գիտէ, այդ պահուն ինչեր կը պատկերացունէին իրենց աչքերուն վերջին կոտորածքէն։ Յուզուած էր նաև ինք Պէտօն, նսրա վերջին առաջարկութիւնն եղաւ ուղղակի կօմիտէներ կազմակերպել՝ իւրաքանչիւրը քանի մը անդամներէ բաղկացած, նիւթական միջոցներ որոնել, աշխատել ձեռք բերել ժողովուրդին վստահութիւնը, ձեռ բերել զէնք, պաշար, և անզէն հայ ժողովուրդը զինաւորել

ինքնապաշտպանութեան համար ընդդէմ գիշատիչ թշնամեաց... իրենց նոր կազմակերպութեան կողմէ երկու մարդ նշանակել՝ մին բուն երկրին խորքերը ուսումնասիրելու, գիտելու ու տեղեկագրելու, ըստ այնմ հարկ եղած միջոցին իր տրամադրութեան տակ գտնուած ոյժերով պաշտպանելու հայ ժողովուրդը թշնամեաց յարձակումներէ, իսկ միւսն—հայ ազգաբնակութեան մէջ տարածելու, խմբեր կազմելու միտքը և այլն և այլն:

Մէկ ըովէում բոլորեքիան ձեռք ձեռքի տուած՝ երեք անգամ կոլոր պտոյտ ըրին սեղանին շուրջը,—որու վրայ, որպէս յայտնի է, դըրուած էին Աւետարանն ու սուրբ, եւ ապա՝ հերթով մօտենալով սեղանին՝ համբուրեցին զայն և ձեռքերնին գրին սըրին վրայ: Ուխտն եղած էր:

Տիրեց խորին լուռութիւն. ոչ ոք չէր համարձակեր խօսք մը, բառ մը արտասանելու. բոլորի սրտերն, ուշքն ու միտք ալացած էին հեռու, շատ հեռու, ուրի իրենց հայ եղբայրներն ու քոյրերը կը նահատակուին իրենց Հայրենիքի, ազգի, պատոյ ու հաւատի սիրոյ համար... Նորարոպէ մառաջ ուխտեցին իրենց անձը ինքնաբերաբար զոհելու ազգի սիրոյ ու հայրենիքի ազատութեան համար: Ո՞հ, որպիսի զոհողութիւն— ուխտ ընել յօժար կամքով թողնել առուն, տեղ, հարազատներ, նոյնիսկ թանկագին ծննդներ ու սիրասուն գնաւակներ և մեռնիլ Հայրենի-

քի ու Ազգի սիրոյ համար. Այս, հայրենեաց աէրը վեր է քան գամենայն բարիք, վայելչութիւն աշխարհայինց և մարդս միայն և մի միայն անոր սիրոյ համար այզպիսի անգին զոհաբերութիւն մը ընդունակ է ընել:

—Վերջապէս, աղաք,—խորհրդաւոր լուռութիւնը ընդհատեց Անդրէաս, դառնալով ընկերներուն.—ալ լուելեայն մտածելու ժամանակ չունինք. իւրաքանչիւր ըովէն մեզի համար շատ թանկ է. հոն, ո գիտէ, ինչեր կը կատարուին մեր խեղճ արիւնակիցներու գլխուն: Եկէք նոյն իսկ այս ըովէին ընտրութիւններու ձեռնարկինք: Ըստ իս՝ վարչութիւն կազմելու համար բաւական է չորս հոգի. բացի ատոնցմէ երկու հոգի ալ, որպէս խօսուեցաւ արդէն, մէկը ճանապարհորդելու բուն երկրին մէջ, իսկ միւսն՝ խմբեր կազմելու և ըստ պահանջին պահպանողական դիրք բռնելու:

—Աղէկ կըսէ եղբայր Անդրէաս, ով որ քան մնանի ըսելու, թող շտապէ զըռուցելու: Ճիշտէ, մեր իւրաքանչիւր ըովէն օրուան չափ մեզի համար նշանակութիւն ունի, —յարեց Արշակ, որ 30 տարեկան յաղթանդամ, գեղեցիկ ու վայելուչ կազմուածքով, արտայատիչ աչուըներով երիտասարդ մըն էր:

—Կարծեմ, կարծիքներ յայտնելու այժմ կարիք չկայ, վասնզի ամէն բան մեզի համար պարզ է. կը մնայ մեզի շուտափոյթ գործի ձեռք զար-

Նելու պատասխանեց Վահրամ։

—Այս, այս, մենք միանգամայն համաձայն ենք Վահրամի արտայայտած կարծիքին հետև։

Գողտնի քուէարկութեամբ ընտրուեցան իբրև նորակազմ վարչութեան անդամներ՝ Վահրամ, Վաչէ, Լևոն և Վահրամ։ Արշակ իբրև խմբեր կազմակերպող, իսկ Պէտօ միաձայն ընտրուեցաւ իբրև այդ վարչութեան ներկայացուցիչ ճանապարհորդող—գործիչ բուն երկրին մէջ։

—Թոյլ տուէք ինձի, տղաք, —խօսեց կրկին Անդրէաս, — արտայայտելու իմ խորին սրտի ուրախութիւնը մեր այս օրուան ընտրութիւններու առթիւ, և առիթից օգուտ քաղելով՝ չեմ կրնար լոռութեամբ անցնել և յոյս չը յայտնել, որ թէ վարչութեան անդամներն և թէ յարգելի Պէտօ ու Արշակ իբրև բոլորիս յարգանքն ու համակրութիւնը վայելող անձնաւորութիւններ, ապագային միանգամայն կարդարացունեն իրենց վրայ դրած յոյսը և այն ատեն մենք հասած կը համարենք մեզի մեր նպատակներուն... Սակայն թող ներուի ինձի իդէպ հոս համեստ առաջարկութիւն մընել։ —իմ կարծիքով անհրաժեշտ է ունենալ որոշ, մշակեալ ծրագիր մը, որով կազմուելիք վարչութիւնք, խմբապետներ, դրամական խումբերն ու այլ մարմինները իրարօւ հետեւսակ մը կապ պահպանէին։

—Այս, անհրաժեշտ է, — յայտարարեցին

վարչութեան անդամներ, — այդ մասին մենք նիստեր կունենանք առաջիկային։

—Ես ալ առաջարկութիւնը մը ունիմ, — իրաւունք խնդրեց Գուրգէն։

—Իրաւունք ունիս։

—Վարչութեան համար, իմ կարծիքով, անհրաժեշտ է ունենալ թէ հոս և թէ ուրիշ տեղեր մարդիկ, որոնք կարենային տեղեկութիւններ ժողովել երկրի այլ և այլ շրջաններում մեր նորածնունդ կամ կազմուելիք վարչութիւններու գործառնութեանց նկատմամբ բռնելիք դիրքի մասին և այլ կարևոր տեղեկութիւններ հաւաքել։

Ժողովի ցանկութեամբ և վարչութեան հաւանութեամբ ընտրուեցան յիշեալ պաշտօնի համար Կ-ում Յուսիկ և Անդրէաս։

Արշալոյսը արդէն բացուելու վրայ էր. անձը և վաղուց դադրել էր. մշուշապատ երկինքը կամաց-կամաց կը պարզուէր, արեգակ իր գլուխ սարերու ետևէն բարձրացուց և լուսաւորեց խաւարի մէջ ընկղոււած աշխարհը։ Փողոցներն կենդանութիւն ստացան, սկսուեց երթևեկութիւն. աքաղաղներն կը կանչէին իրենց ծղրուղուն, իսկ ճնճղուկներն իրենց բուներից դուրս գալով՝ ազատ, ուրախ, վստահ թուչկուելով, ոստոստալով կը ծըլվան իրենց սովորական մեղեդիներ. քիչ հեռու, վարդենիի թուփի մը վրայ կայնած է սոխակ, և տեսնալով նոր բացուած վարդի կոկոնները նոր ծլած կանաչ ծառերու

տերևներն՝ իր քաղցրահնչիւն մեղեղիներով կ'առ ւետէ անոնց նոր կեանք ու իր երգով մարդու սիրտ կը շարժէ, ու թնդացնէ խանդավառ իդաբերով։

Տղաք,—առաջարկեց Մինաս, որ ամէնէն հասպկաւորն էր,—արիք հրաժեշտի ողջոյն տանք միմեանց, ասօրուանէ նետուինք մեր ուխտած ասպարէզին մէջ. հեռու, ուրեմն, այսուհետև մեզմէ վախկոտութիւն, թուլամորթութիւն, նախանձ, քէն ու ոխ, ատելութիւն... Այժմ մենք բոլորս ալ եղբայրներ ենք 'ի մի սիրտ և 'ի մի հոգի դառած, Մայր-հայաստանի համար չկայ ոչ բողոքական, ոչ կաթոլիկ, ոչ լուսաւորչական, այլ Հայկայ սերունդ, ազգի զաւակներ. ուրեմն տանք ձեռք ձեռքի և միաձայն ասենք.—տուր ձեռքդ, եղբայր, եղբայր ենք մենք։

Եւ ի հաստատութիւն մեր անկեղծ ուխտի՝ տանք միմեանց շրթունքներուն եղբայրական համբոյրներ,—աւելցուց Համբարձում։

Հերթով մօտեցան Պէտօին ու Արշակին Շիարի ճանապարհ, ռմաք բարով, «Ձեր գործին ալ աշողութիւն» բարեմաղթելով իրարու, համբոյրներ զրոշմեցին իրար շրթունքներուն, սեղմեցին իրար ձեռք ու ցրուեցան իրենց տները՝ տանելով իրենց սրտի տախտակներուն վրայ նըկարուած քաղցր յիշողութիւններ և գործելու անյագ ցանկութիւններ։

Դ.

Անցան տարիներ։ Կ. քաղաքին մեր վարչութիւն իր գործերն հաստատուն հիմքերու վը ըայ գնելով անդադար կը գործէր. թէ քաղաքին և թէ շրջակայ գիւղերու ու աւաններու հայ ազգաբնակութեան մէջ արդէն ձեռք բերած էր մեծ վստահութիւն ու համակրութիւն. նոյն խսկ բարոյապէս ազդած էր քարասիրտ վաշխառուներու. որք Քիւրդէն և Տաճկէն ոչ պակաս կը հարստահարէին հայ շինականը։

1890 թ. սկսեալ ամենուրեք տարաբաղդ Հայաստանի մէջ Քիւրդէր միացած թիւրք բաշիբօղուկ զօրքին հետ՝ քարուքանդ կընէին մեր հայրենիք և անպաշտպան ժողովուրդը սրի կ'անցունէին։ Այդ արհաւեկըներու, փորձութեան ժամանակ մեր հայ երիտասարդութիւն անգործ իր վիզը ոսոխին սրին դէմ տուած կայնած չէր. նա ալ միացած դարերով իր ձեռքը սուր ու հրացան չառած շինականի ու գեղջկունու հետ՝ գուրս էր եկած իր անհաշտ թշնամու դէմ, և հայրենեաց սիրոյ կրակով վառուած՝ հերոսաբար կը կուռէր նոցա դէմ և թոյլ չէր տար ներս խուժելու հայոց անզէն, անպաշտպան գիւղերը... նուիրական վառարանները։

Քրիստոնեայ Եւրոպա զարմացած էր մի բուռն հայ ազգի դիւցազնութեան վրայ, որ յոյսը իր չնչին ուժերու վրայ դրած՝ կը ճգնի թօ-

թափել իր վրայէ ստրկութեան փոշին... Արշակ և իր ընկերներ—խմբապետներ—իրենց մարդերով շտապած էին հոն, ուր զուրանի մոլեռանդ զաւակներն, ինչպէս վերը ըսինք, քարուքանդ կընէին և մոխիրի կոյտեր կը դարձունէին երէկուան շէն, մարդաբնակ հայ գիւղերն ու քաղաքներ... Նոյն նպատակով կը գործէր արդէն Պէտօն։ Սակայն միանգամ բորբոքուած Մահմետի արժանաւոր զաւակներու անասնային կիրքը դրանով չը յագեցաւ, այլ գնալով էլ աւելի բորբոքուեցաւ. նոքա սկսեցին նորանոր պատրաստութիւններ տեսնալ, արշաւելու վանի, Կարնոյ, Դիարբէքիրի, «Ըմբոստ» Սամնոյ և այլ հայաբնակ զաւառներու վրայ անապատ դարձելու համար։ Հայ երիտասարդութիւնն ալ մէկ կողմէն կը յուսադրէր աւերեալ հայրենիքի հայ ընտանեաց մացորդներն և միւս կողմէ նոր ոյժեր ձեռք բերելով՝ ընդդիմութեան ցոյցեր կընէր բարբարոսներուն։ Հայ օրիորդներն ու պատանիները ոչ սակաւ քաջութիւններ ցոյց կուտային կոռւին ատենները. շատեր «կամաւոր զինուոր» գրուած էին և իրենց մատաղ ու փափուկ կուրծքերնին դէմ կուտային թշնամու սըրին ու սուինին, հրացանին ու թնդանօթին։

Պարբերական մամուլն օր աւուր իւր էջերըն կը լեցունէր ամենաքստամելի, ահոելի նկարագրութիւններով, պատկերներով...

Ահա այդ ժամանակներուն մէջ կամաւոր-

ներու խումբ մ'ալ, թուով 25 հոգի, որոնց գըլուխ անցած էր Արշակ, յառաջ խաղաց. նորահագեր էին լազի հագուստ, բաշլուխնին գլուխնին կապած, խաչած փամփուշտի կաշուէ պահարաններ և ոտից ցգլուխ զինեալ։ Ամենեքեան ուրախ ու զուարթ են, թէկ կերթան դէպի մահ... կարգապահութիւնը կատարեալ է, ամեն ոք անհամբեր կը սպասէ իր խմբապետի հրամաններուն։ Պահ մի իրենց շուրջ նայեցան, իրարուխորհպաւոր հայեացքով նայեցան ու ժբարի ճամբայ մեզին, «Տէրը յաջողութիւն տայ մեր սուրբ գործին» ըսելով՝ շարժուեցան դէպի յառաջ... դէպի կրակ. դէպի մահ։

— Տղաք, — ճամբին դարձաւ Արշակ իր ընկերներուն, — ձեզի տեսնամ, անունս վար չըձըգէք մեր միւս խմբապետներու քով. իմ յոյսը ձեր անկեղծութեան ու կտրճութեան վրայ եմ դրեր... Տեսէք, որքան մութ գիշեր է — կասես երկինքն ալ կը նպաստէ մեր խորհրդաւոր ճամբորդութեան — լուսինն՝ ու փայրկլուն աստղերն իրենց գլուխնին թագուցեր են ամպերու ետևը, ո գիտէ, թերեւ այս գիշերուան ճամբորդութեան ժամանակ հանդիպենք տարօրինակ արկածներու. Ըսելս ան է որ՝ մենք ամեն ժամ, ամեն ըոպէ, նոյն իսկ ամեն վայրկեան պատրաստ պիտի ըլլանք մեր թշնամուն պատասխանելու։

— Պատրաստ ենք ամենայն վայրկեան հրամաններդ մի ըստ միոջէ ճշտութեամբ կատա-

ըելու, —յուսադրեցին մեր երիտասարդներ իրենց խմբապետին:

Կէս գիշեր է. սաստիկ մութ. մերոնք անդադար ճամբայ կը կտրեն, ամեն ճիգ կը թափեն որպէսզի իրենց ձգեն մօտակայ Բ... հայաբնակ գիւղը. նոցա հաշւով՝ դեռ երեք ժամուայ ճամբայ ունին մինչեւ գիւղ։ Նոցա նպատակն էր այդ գիւղին մէջ զօրը մնալու, հանգստանալու, քանի մը կարեոր գործեր կարգի բերելու, և ապա շարունակելու իրենց ճամբան։ Սակայն որքան եղաւ մեր հայրենասիրաց զարմանքն ու զայրոյթը, երբ կամաց-կամաց նկատեցին ծխի ու մխի, կրակի ու բոցերու մէջ կորած գիւղը... Յայնժամ Արշակ պահ մի սոսկաց, ցնցուեց կատաղի հայեացք մը գցեց իր շուրջը, ու ապա դառնալով իր ընկերներուն սա հրամանը արձակեց։

—Տղաք, ըստ երևոյթին թշնամին մեզմէ շատ հեռու չէ, գուցէ նոյնիսկ Բ... գիւղն տակն ու վրայ, քարուքանդ կընէ... կը տեսնաք Բնչպէս կրակի բոցերն ու գուլայ գուլայ մուխն վեր կը բարձրանան. անտարակոյս այդ շէն գիւղն ներկայիս ենթակայ է աւազակարարոյ քիւրենրու քարբարոսութեանց, խժդժութեանց, աւերածութեան... Արքացէք ուրեմն, եղբարքս, մահ ամեն ժամանակ մահ է. մարդս մի անդամ պիտ մեռնի. երանինորան որ կը մեռնէ պատուաբեր մահով—այսինքն սուրբ ձեռքին ոսո-

խի դէմ կռուելիս.—ահա այսպիսի մահը անմահութիւն է... յառաջ, յառաջ դէպի պատուաբեր մահը։

—Արշակ, —կամացուկ մօտեցաւ նորան կամաւոր զինուորներէն մին, —ականջիս խուլ ձայն մը հասաւ. նոքա են, կուգան դէպի մեզ։

—Կամաց, ոչ մի շառուկ, ոչ մի շարժում տեղներէդ. ամենքդ ձեզի ցոյց տուած դիրքերնիդ մնացէք հանդարտ ու սուլիչի ձայնին պատրաստ կեցէք։

Այդ պահուն քիչքիչ լսելի եղան բազմաթիւ ձիաներու ոտներու զրովիւններ, խրխինջ, խառնիճաղանձ զօրքի միջէն ձայներ, բարձրաձայն քրքիջներ, ափեղցփեղ, լպիրշ սրախօսութիւններ ու լկտի կատակներ... Լեզուն պարզ քիւրդերէն էր, ըստ այնմ մեր խմբի գուշակութիւն, դժբաղդաբար, ճիշտ էր, որ նոքա՝ այդ քիւրդ հրոսակաց խումբը աւերելով Բ... գիւղն, մեծ աւարով կը քաշուէր իր որջեր, լեռներ ու վրաններ։

—Այս գեաւուր ֆլայներ (հայերու) տներ ինչքան էլ թալնենք, տանենք, այրենք, իրենց ալ կոտորենք, դարձեալ արմատախիլ ընել անկարող ենք. կասես սունկի պէս կը բումնին, կ'աճին, դարձեալ տուն-տեղ կըլլան, փարայ ալ կունենան։

—Հ՞ս, Բնչէ, Զաւօ, —պատասխանեց քիւրդ մը—օգուտ չէ մեզի համար ֆլայներու կրկին

տուն-տեղ դառնալը։ չէ՞ որ մենք գրեթէ սեպ-հական ոչինչ չունինք, ամեն ինչ անոնց աշխատածն է, զորս մենք նոցա ձեռքէն խլելով՝ հանգիստ կը վայելենք։

—Շիտակ կըսէ Ռասօ, —խօսեց երրորդը, Աստուած շէն պահէն նոցա օճախ մեզի համար։ Աստուած վկայ, տունս բուռ մը ալիւր չեմ թողեր. ահա, տես, քսակս մէջիդիաներով լեցուերէ, ամեն տեսակ բարիքներով այսուհետև տունս ալ կը լեցուի...»

Ի՞նչ ունինք մէջը օր, կուրօ (տղայ) —յարեց Ահմօ: —Մեր գիւղին մէջ նոյնիսկ քիւրտ կոյր աղջիկ մ'ալ չէին տար ինձի, և ահա դաւակիս՝ սիրուն, մատղաշ, պոյով-պուսաթով ֆը-լայ աղջիկ մը կը տանիմ մեր մարգարէին սուրբ հաւատին դարձունելու և անոր հետ պսակուելու... բաւական է տարին մէկ-երկու անգամ այսպիսի յարձակում գործել - և աշխարհային ամենայն տեսակ բարիքներով կը լեցուին մեր տուները...»

—Այ լիրը տղայ, —բարկացած խօսեց Ալօ, —դեռ երես ալ ունիս դէմս կը խօսիս, չէ՞ որ այդ սիրուն գեաւուր աղջիկ իմ համեղ բաժինն պիտ ըլլար. բայց դուն լրբաբար զայն խլեցիր ինձմէ. կուզես մատնեմ Դաժտի աղային...»

—Հէլբէթ քուկդ է, դուն մէկին տեղ երկուս կը տանիս, դեռ ես չեմ խօսիր, ելեր մատնութիւն ալ կուզես ընել ինձի վրայ:

—Ո՞չ, եթէ արդար դատելու ըլլանք՝ այդ համով-հոտով վարդը խմբապետին կը հասնէ, նա պիտի վայելէ նոր բացուած կարմիր այդ վարքը... —լրբաբար խօսացին ասդին, անդին։

—Այդ դեռ ոչինչ, վասն զի ամենքս ալ ունինք ներկայիս մէկ կամ երկու երկնային հուրիներ, բայց ես ձեզի ցաւալի, շատ ցաւալի գէպք մը պատմեմ, —ընդհատեց Աշօ. —լիրը աղջիկ մը, հազիւ 12 տարեկան, երկար ինձի չարչարեց, չէր անձնատուր ըլլար... ես ալ զոռով հայիփս առայ անորմէ... ու իրեն ափսոսալով թալեցի կրակի բոցերուն մէջ....»

—Հըմ, ատիկա դեռ ոչինչ է ինձի հետ պատահածին հետ, արիւնոտ աշուրները լայն բանալով խօսեց Ավգօ, —կին մը, իր զաւակ պինդ սեղմած էր կուրծքին և իր շոննեցած պատիւը կը պաշտպանէր, դէմս յանդգնեց մինչև խսկ խօսալ, աղաչել, պաղատել, որպէսզի խնայեմ իր անսարատ պատիւը... խոստանալով իր տան մէջ գտնուած բոլոր ունեցած-չունեցածը ինձի տալ... Այսպէս հէրսս հանեց այդ լիրը ֆլայ կինը օր, խսկոյն մազալու հաշիւս անոր հետ վերջացուցի ու զինքը իր տան մէջ գտնուած սիւնէն կախեցի՝ հաստ չուանը պարանոցը ձգելով... տղան ալ, ՚ի հարկէ, երկու կտոր ընելով։

—Կարիճներս, —ընդհատեց քիւրտերու քըսամնելի խօսակցութիւն՝ խմբապետ Դաժտի, —հարկաւ շատ աշխատեցանք, այնքան նեղութիւն

պատճառեցին մեզի գեաւուր ֆլայները, որ մէկ ժամուայ գործը մենք հարկադրեցանք հինգ ժամուան վերջացունելու. կեանքիս մէջ այսպիսիրչէի հանդիպած, ամմա օրհնեալ է Աստուած,——գոհ եմ Անորմէ, —որ մեր կողմէ ոչ մէկ զոհ չըտուինք, ասենք զէնք չունին այդ անօրէններ, ինչով կընային կոուել մեր դէմ... կուզեմ ըսել որ շուտով կը լուսանայ, այս մեր քաջագործութիւններ կը տարածուին ամենուրեք, իսկ մենք գեռ շատ ունինք ճամբայ կտրելու մինչեւ որ հասնինք մեր անառիկ տեղեր... եկէք իջնենք հաս, այս ձորակին մէջ, պաղ աղբիւրին քով, Աստուծոյ պարզեածէն վայելենք, և ապա քանի մութ է «համիդիէն» մեզի չէ պատահեր, հեռանանք, վասնզի անոնք մեզնէ զուով կը պահանջեն բաժին, այն ատեն կընանք անտեղի կը ռուի բոնուիլ անոնց հետ:

Ռոպէ մը չանցած ամենեքեան թռան իջան իրենց ձիերէն, իջեցուցին իրենց առատ հունձը, պաշար, աւար, գերի կանայք ու աղջկունք, ոտք ու ձեռք կապոտած՝ անկիւն մը տարան, թափեցին իրարու քով, թողով սոված, ծարաւ պապակուած, ու իրենք ուրախ-ուրախ, փողոցային լկտի կատակներ ընելով՝ հանեցին վրաներէն բուլոր զէնքերնին, թափեցին ասղին, անղին, խարոյկ պատրաստեցին, մորթեցին ոչխարներ, խոռովածի շիշերը շարեցին ու իրենք նստոտեցին

կանաչ խոտերու վրայ՝ Աստուծոյ բարիքէն վայելելու:

Եւ հազիւ թէ առաջին պատառնին իրենց բերաննին տարեր, երբ յանկարծակի սուլիչի ձայնը հնչեց և միաժամանակ հրացաններու տրաքարաքոցը աստեղէ անտեղէ ելաւ. կարկտի նման ըիւրտ հրոսակներու գլխուն կը թափէին տաքացած, շիկացած, կրակ կտրած գնդակներ. ըոպէի մը մէջ բարձրացաւ ահագին իրարանցում մը. ձիաներու խրիսնջներ, ահարեկ հրոսակներու վայնասուն, փախչողներու, մեռնողներու, վիրաւորեալներու միս ու վախ, հրացաններու արձակած մուխ, գնդակներու տրաքարաքոցը—այս ամենը օդը կը թնդացնէին ու տեսակ մը սարսափ կազդէին գերեալ հայ մանկահասակ կանաց և օրիորդաց վրայ:

—Եաման, մեռայ... ճար մը...

—Օգնեցէք...

—Մեռայ... Ամօջան... մօտ արի... համբուրեմ...

—Խղճացէք... մեղք ենք... տուն, տեղ, կնոջ, զաւակներու տէր...

—Ահ, պուտ մը ջուր... եաման, ջուր...

—Եաման, ես ալ զարնուեցայ... ո՞հ սիրտս խառնեց...

—Խղճացէք, չէ որ մենք ալ մարդ ենք, Աստուծոյ ստեղծածներ... խղճացէք...

—Ո՞հ, սիրտս...

— Մնաք բարնվ, զաւակներս... այլ ևս ձեզի պեսնալու չեմ...

— Ասմար ջան, քու քաջ Ալօ զարնուեցաւ... ան, արի, արի սիրելի Ասմարս...

— Տղաք, շտապեցէք ձեր սրեր փորձելու, այժմ վրայ տանք դաշոյններով,—հրամայեց խըմբապետ իր ընկերներուն:

— Արձակեցէք անյապաղ մեր սարսափահար գերեալ քոյրերու կապանքներ... մի վախնաք, մենք հայ ենք, եկել ենք ձեզի ազատելու...— յուսադրեց Արշակ:

Այդ պահուն գեղանի օրիորդ մը, հազիւ 15 տարին բոլորած, սուր ՚ի ձեռին խելագարի նման կը փնտռէր վիրաւորեալ աւազակներու մէջ մարդ մը, և յանկարծ կայնելով մէկու մը քովը, որ գեռ չէր փշած իր շունչ՝

— Դու՛ անիրաւ քիւրտ Ահմօ, ուրացար մեր տան մէջ կերածդ աղ ու հաց, տիրոջդ՝ հօրս բազմաթիւ բարութիւններ, ելար յանդուզն կերպով աւազակներուն հետ միացար ու դիմ հօր տուն աւերելով, սրի անցունելով ամենքը, ինձ ալ առևանգեցիր... ընդունիր, ընդունիր ուրեմնինձմէ, անարժան ու անհաւատարիմ ծառայ, քո գործած ոճագործութեանց փոխարէն մահ իմ ձեռքէ... Ու չը խնայելով քիւրտի աղաչանքներուն՝ անպատռած օրիորդ խըմբ իր սուըն անօրէնին սրտին մէջ և յետ վագեց գէպի ընկերուհիներն ու ազատարարներ:

Արդէն լուսացեր էր: Ճամբին կանաչ խոտերու վրայ փոռուած էին 10-ի չափ գիշակներ, մեծ քանակութեամբ փամփուշտ, զէնք, թախած գիւղէն բերած տւար, տաւար, հօտեր, քանի մը ձիաներ ալ, որք կարծէին արտերուն մէջ:

— Տղաք, ձեզի տեսնեմ, շնուտ ձիաներ բարձեցէք սա աւար, գիւղին կարողութիւն, և մեր մատաղ օրիորդներն ու հիւանդ կանայք վրանին նստացունելով՝ ելնենք ճամբայ:

Քառորդ ժամուան ճամբայ էր մնացել մինչև թ... գիւղ. քեարւան հասաւ հոն այն ժամանակ, երբ ողջ մնացած բնակիչներ իրենց սիրելեաց գիշակներու վրայ աղի արցունք թափելով՝ կ'ողբային անոնց անդառնալի և միանգամայն սգալի կորուստ... իսկ գիւղն դեռ կորած էր թանձր մուխի մէջ... կայծակի արագութեամբ նորա հաւաքուեցան և ընդառաջ ելան ազատարաներու. իրենց շնորհակալութիւննին կը յայտնէին նոցա, կօհնէին նոցա ծնունդ, երկար կեանք ու երջանիկ օրեր կը խնդրէին Աստուծմէ, կը համբուրէին ճակատներ...

Սրտաճմլիկ տեսարան. մեր կտրիճ երիտասարդներ ողջ գիւղն պտտեցան,— տեսան բոլորովին քար ու քանդ եղած, աւերեալ, իսկ քրիստոնէական եկեղեցին սրբապղծուած. սուրբ աւետարան ու խաչ ոտքի տակ տրորուած, վրչացուցած, և բոլոր ս. գրեանք ու պատկերներ կուրտած, տրորած, պատռած, թափթլփած...

ծերունի քահանայն անպատմելի չարչարանաց ենթարկուած, անպատուած, անարգուած, վերջն ալ մերկ, ածելուած երեսով մէկ սեան կապուած հաստ չուանով:

Գոհաբանական մաղթանք կատարելով՝ քահանայն արտասուաթոր աչուըներով դէպի երկինք՝ Աստուծոյ աթոռ վերառաքեց իր վշտալից սրտի մըմունջք, աղօթքներ... Այնուհետև մեր երիտասարդներ յուսադրելով ժողովուրդն ու վըշտահար քահանայն, տալով նոցա իրենց յետ խըլած աւար, ինքնապաշտպանութեան համար գիւղի կտրիճներէն կազմելով խումք և աալով նոցա զէնք, հրահանգներ և կարենը կարգադրութիւններ ընելէ ետքը, ուղղեցին իրենց ճամբան դէպի միւս հայաբնակ գիւղեր:

Ե.

Ամառ էր: Սար ու ձոր, հովիտներ ծածկուեր են գոյնզգոյն, անուշահոտ ծաղիկներով, հարիւրաւոր անմահական, անուշահոտ, սառնորակ գետակներ ու աղբիւրներ կարկաչելով ու հարիւրաւոր ոլոր մոլոր պտոյտներ ընելով, վըշվալով ու յառաջ սահելով՝ կերթան կը խառնուին Մայր-Արաքսին հետ... Օդը մաքուր, յըստակ, ջուրը մաքուր, պատուական, առողջարար, կապուտակ երկինք պարզուած. օդին մէջ կը սլանան բազմաթիւ ու բազմազան սիրուն

թոչուններ և կը ճլվան իրենց գողարիկ, յուզիչ երգեր. ծառերն վաղուց ծաղկեր են, տերեակալեր են. բացուեր են վարդեր, որոնց սիրով վառուած սոխակները թուփերու վրայ սստոստալով, թոչկոտելով կ'երգեն հոգեզմայլ մեղեդիներ... Օքը կիւրակի էր: Մեզ արդէն ծանօթ Սարգիս այդ օր կառքով իր ընտանեկան գործերով կերթալ հեռու տեղ. բնութեան հրաշլիքներ, գեղեցկութիւն չէին զրաւեր նորա տըխուր, շատ տխուր սիրտը... նա ընկղմուած էր մտածմունքի ովկիանոսին մէջ, երբեմն-երբեմն իր աչուըներ կը դարձունէր այս ու այն կողմ, որ կասես մի ինչ որ բան մը կը փնտուէր անհուն տարածութեան մէջ, ու կրկին անձնատուը կըլլար իր դառն մտածմունքներուն... կառքի ձիաներն, ըստ երկոյթին, ուրախ էին այդ օր ճամբայ գնալուն. նոքա՝ այդ անմեղ, պիտանի կենդանիները կառք վեր առած՝ կը սլանային յառաջ, ժամ յառաջ տիրոջը հասցնելու մօտակայ կայարանը: Կառապանը իր մտրակ անդադար օդին մէջ շղբացնելով՝ կը խրախուսէր զկենդանիները.— հա, բալէքս հա, ձեզի տեսնամ, ինձի ամօթով չը թողուք աղայի քով:

Այդ պահուն կառք մ'ալ ետեւէն դէպի իջեւան կը սահէր, և երբ հասաւ Սարգսի կառքին, անծանօթ ճամբորդը—որ ըստ երկոյթին Պարսիկ մըն էր—մաքուր թաթարերէն լեզուով բարետուեց նորան, և հրամայեց իր կառապանին ձիա-

ներն դանդաղ քշել, որպէսզի մինչև իջևան անձանօթ հայուն հետ զրուց ընելով երթար:

—Թոյլ տուէք, ճամբորդ հայ եղբայր, ձեր անունն իմանալու:

—Սարգիս, իսկ ձերը:

—Մահմէտ-Ալի:

—Ուրկից կուգաք և մւր մտադիր էք գնալ,

Սարգիս աղբար:

—Կ... կուգամ և ընտանեկան գործերուս պատճառաւ փոքրիկ ճամբորդութիւն մը պիտի կատարեմ մեր երկրին մէջ. իսկ դժւք:

—Ես ալ թիւճէր *) եմ, առևտրական գործերով մտադիր եմ ձեր երկրին քանի մը քաղաքները այցելել:

—Յաջողութիւն կը ցանկամ գործերուզ, — արտասանեց Սարգիս:

—Սարգիս աղբար, —խօսքը փոխեց Մահմէտ Ալի, — ես միանգամայն կը զարմանամ ձեր ազգին վրայ. ճամբորդութեան ժամանակ Հայերը շատ տխուր կըլլան, տեսակ մը մելամաղոտ, մտախոհ, յուսահատ, ընկղմուած մտածմունքի մէջ. ինչ տեսակ սքանչելի, հրապուրիչ օր ալ ճամբայ երթալու ըլլան, անոնց սրտերը միշտ տխուր կը մնան...

—Ե՞ն, աշխարհ է, այդպէս ալ կըլլայ. ամեն ազգի մէջ ալ կան տոհմական լաւ և վատ սովորութիւններ. մեր Ազգն ալ այնքան չարչա-

*) Վաճառական.

րուեր, տանջուեր է, ստրկացեր է, որ ամենքն ալ ակամայ մելամաղձու են դարձեր... Գիտեմ, խօսքդ իմ մասին է, որ տխուր եմ ներկայիս և չեմ խօսիր ձեզի հետ:

—Ներողութիւն նկատողութեանս համար, — գլուխ խոնարհելով արտասանեց Մահմէտ-Ալի, — բայց և այնպէս ձեր ազգ շատ առաւելութիւններ ալ ունի մեր Պարսիկ ազգին վրայ. օրինակ, գուք շատ զգօն, լուսաւորուած, զարգացած ու քաղաքակրթուած ազգ էք: Նոյն իսկ օրինակ առնենք մեր իրանը. հոն ամենապատասխանատու պաշտօնները մեր Արեգակնավայլ Շահը կը յանձնէ Հայերուն...

—Դուք՝ իբրև վաճառական՝ թերևս գըտնուած էք մեր երկրին շատ քաղաքներ, օրինակ՝ կարին, Վան, Դիաբըքիր, Տրապիզոն, Տոփրագ-կալէ և այլ տեղեր, և գուցէ ականատես եղած մեր ազգի գլխուն եկած վերջին փորձանքներուն, քստմնելի կոտորածներին...

—Ներողութիւն, խնդրեմ մի շարունակէք այդպիսի տխուր պատմութիւններ. ես այլ ևս սիրտ չունիմ լսելու, այնքան սոսկալի բաներ տեսած եմ այս իմ աչուրներով — վայ ինձի — ձեր Հայրենիքին մէջ, որ թնդ Ալահը ինք այցելութիւն մը ընէ այդ պատուական Ազգին... Ապա թէ ոչ՝ ամօթ ու նախատինք է մարդկութեան համար — թողնել բուռ մը ժողովուրդ Քիւրտ գա-

գանաբարոյ հրոսակնելու և թիւրք բաշիբօղուկնելու ճանկին մէջ...

—Շնորհակալ եմ, Պարսիկ աղբար, ըստ մարդասիրական զգացմանցդ համար:

—Թողնենք որ Պարսիկն ու Հայն իբրև իրանեան ցեղի սերունդ պարտական են մէկզմէկ սիրել ու պաշտպանել, այլ մտածենք որ մենք ամենքս ալ մարդ ենք և իբրև մարդիկ պէտք է արդարութիւնը պաշտպանենք: Հա, մոռացայ ըսելու որ անունդ շատ լաւ անուն է. Սարգիս անուն սուրբ մը ունեցած է ձեր ազգ, մեծ հրաշքներ, քաջութիւններ գործած է, և ձեր եկեղեցին անոր համար առանձին տօն նշանակած է. Եթէ չեմ սխալիր, նշանաւոր սրբասէր կաթողիկոս մ'ալ ունեցած էք այդ անունով:

—Կրկին շնորհակալութիւն, որ այդպէս ուսումնասիրած էք մեր թշուառացած Ազգի պատմութիւն. այսօրուան խիստ տիրութիւնս մասամբ իւիք մեղմեցաւ, փարատեցաւ, կերևայ թէ ձեզի աստուած հասցուց՝ փարատելու իմ տրխրութիւն... դարձեալ շնորհակալութիւն:

—Օ՛, միթէ այժմեան 19-րդ դարին մէջ յանցանք չէր ըլլար արգեօք անզիտակ մնալ աղգերու պատմութեանց:

Ընդհատուեցաւ նոցա հետաքրքիր զրոյց, երբ կառապանը յայտարարեց ճամբորդներուն իջեան ժամանելը: Մահմէտ—Ալի իսկոյն թուաւութեանց առթիւ:

Կառքէն և մօտենալով Սարգսի՝ օգնեց նորան իջնելու իր կառքէ:

—Ա՛խ, այդ ինչ նեղութիւն է կը կրէք, յաւիտեան ինձի պարտաւորեցուցիք:

—Ներողութիւն, ասիկա բարոյական պարտք մըն էր և ուրիշ ոչինչ:

Սարգէն երեկոյեան ժամի 6-ն էր, երբ հասան իջնան: Կը փչէր զովքամին, մարդ չէր ուզգէ դրսէն ներս գալ, այնքան օդը մաքուր ու մեղմ էր. մեր Սարգիսն ալ կամեցաւ մնաս բարև ըսել անծանօթ պարսկին և շարունակել իր ճամբան, երբ վերջինս սեղմելով անոր ձեռքը խնդրեց.

—Սարգիս աղբար, այս գիշեր իմ խաթեր համար միասին հոս գիշերենք, վասնզի այստեղ ես ունիմ քանի մը ծանօթ մարդեր, որոնց հետ անպատճառ տեսնուել կուզեմ:

—Ամենայն ուրախութեամբ, ձեր ազիզ խաթերը բնաւ կը կժտրեմ,—պատասխանեց Սարգիս:

—Ես երբէք մոռանալու չեմ ձեր ընկերսիրութիւնը, բարեսրտութիւնը, եղբայր Սարգիս:

—Իսկ ես բնաւ ցմահ մոռանալու չեմ ձեր մարդասիրութիւն և արտայայտած ցաւակցութիւնն մեր ազգին հասած դժբաղդութեանց, թշուառութեանց առթիւ:

Այդ պահուն իջնանի պատասի ծառան հեւալով ներս բերեց հեշտաեռը և զրեց սեղանի վրայ: Սարգիս իսկոյն ևեթ թէյամանը թէյ զը-

ցեց, դրեց հեշտաեւի վրայ ու՝ սեղան պատրաստելով՝ դարձաւ Մամհէտ-Ալուն՝

—Այժմ, բարեկամ, հրամեցէք սեղանին մօտ, գիտեմ, քաղցած կը լլաք. շարունակենք մեր քաղցը, միխթարական զբոյցնին և վայելենք այս աղքատիկ սեղանէն:

—Շնորհակալ եմ, ճիշտ է, քաղցած եմ, ճամբին ոչ մէկ տեղ հանդիսաւ չառայ, շարունակ քշել տուի ձիաները, որ շուտ հասնեմ աստեղաց գործերս կարգի դնելու համար:

—Հրամեցէք, մօտս նստեցէք. այժմ զրուցէք ձեր իրանի կեանքէն. հոն ես չեմ եղած, լսելովս Շահը իր բոլոր հպատակներուն առանց կըօնի և ազգի խտրութեան մէկ աչքով կը նայէ. կըսեն հայերուն շատ կը պաշտպանէ:

—Միանդամայն ճիշտ է, —մօտենալով սեղանին վերցրեց իր զլիի քիւլահը *), մեր Շահը, —թող Աստուած անոր կեանքը երկարէ —Սուլթանի պէս բնաջինջ չի ըներ իր հպատակ, աշխատասէր, ժրաջան, տոկուն, հաւատարիմ ու ազնիւ հայ ժողովուրդը, որոնց դառն քրտինքով աշխատած, ձեռք բերած ոսկիներով կը լեցուի արքունական գանձարան։ Իրանի Արեգակնախայլ Շահը շատ լաւ ըմբռնած է 19-րդ դարու հոգին, կը վախնայ մազաչափ անգամ շեղուելու անորմէ, որ կարող է տանել՝ի յաւիտեան կորուստ……

*.) Պարսկական գտակ.

—Տէր Աստուած, —Սարգիս կը մտածէր իր մտքին մէջ, —ի՞նչ կը տեսնեմ աշւըներովս, —Երազ թէ իրականութիւն, այս Պարսկի խօսակցութեան ոճը խիստ նման է իմ անմոռանալի ընկեր Պէտօյի ոճին, կասես մէկ ինձոր կիսած... ահ, գեռուրիշ աւելի խոշոր նմանութիւններ ունի այդ մարդը անոր հետ. —Երեսին վրայ փոքրիկ —թերես զինքը չը ճանչցողներուն աննշմարելի —խալը... Սակայն նա՝ Պէտօ Հայ է, իմ ընկերը, իսկ այս մարդը բուն Պարսկի, ան ալ անծանօթ... Պէտօ առողջ, քարի կազմուածքի տէր, գեղեցիկ, ճերմակ, լիք-լիք թշերով, փոքրիկ մօրուսով, նոր-նոր աճող բեխսերով մարդ էր, իսկ սա միանդամայն Պարսկի կը նմանի. գիտէ պարսկական լեզուն (չեմ հասկնար), շատ աղէկ կը խօսի թաթարերէն, վրան ունի պարսկական հագուստ՝ արա (վերարկու), ոտներին տիւբեանդի և գլխուն բիւլլահ, իսկ և իսկ պարսկի... ինք վերին աստիճանի նիհար, վահտ, ջղային, աչքերին տակ փոսիկներ գոյացած, գունատ ու դըգոյն երեսով, երկար պարսկական փառաւոր մօրուսով... ըսենք պոյերն մէկ, տարիքնին մէկ կուգայ, նոյն արտայայտիչ աշւըներն, նոյն սըրամտութիւն, նոյն գեղեցիկ ճակատ, նոյն զրաւիչ ու բարի հայեացք, նոյն աշխուժութիւն, նոյն նշան, որ զինքը կը մատնէ և պարսկութենէ հայ կը դարձունէ... հայ, մոռցայ ամենագըլխաւոր նշանն համեմատելու —Պէտօ սովորու-

թիւն ունէր սեղան նստած ատենները միշտ իր
գլխարկ վերցունել և աչըներն դէպի երկինք
յառելով՝ սրտին մէջ ինչ-որ աղօթք մըմմջալ,—
սա ալ նոյնը կընէ, թէև փոքր ինչ թոյլ, աննը-
կատելի կերպով:

—Ներողութիւն, Սարգիս աղբար, որ կընդ-
հատեմ ձեր խորհրդաւոր լոռւթիւն,—առանձին
շեշտով մը սկսեց Մահմէտ-Ալի, հրամանքնուդ
որտեղ կարող եմ կըկին տեսնել, որ ինձ համար
մեծ ու կըկնապատիկ երջանկութիւն կը համա-
րիմ:

—Ես մէկ տեղ մնալու չեմ, միայն մէկ քա-
ղաքի մէջ թերես ամսու մը չափ մնամ:

—Խնդրեմ ձեր այնտեղի հասցէն տաք ին-
ձի, ես ալ իմ հասցէն կուտամ ձեզի. եթէ ար-
ժանի համարիք, երկտող նամակով զիս երջա-
նիկ կընէք:

—Ամենայն ուրախութեամբ:

—Զը մոռանամ ըսելու, որ ես ձեր քաղքին
մէջ ալ գործ ունիմ, թերես հոն ալ հանդիպիմ.
բայց կափսոսամ որ գուք այն ժամանակ հոն
չէք ըլլար. յամենայն դէպս ես Դ. ձեզի նամա-
կով կը հաղորդեմ:

—Յոյս ունիմ որ մենք ցմահ իրարու չենք
մոռնալու, —յանկարծ արտասանեց խորհրդաւոր
կերպով Սարգիս. —միայն կը խնդրեմ ձեր նե-
րողամտութիւն, որ ինձի զբաղեցնող բանի մը
պատճառով թոյլ պիտի տամ ձեզի հետ խօսելու,

—Իրաւունք ունիք, մենք այժմ եղբայրներ
ենք: —Շնորհակալ եմ, միայն այն պիտի ըսէի,
որ ես ունէի մէկ լաւ, ազնիւ, շիտակ բնաւո-
րութեան տէր սրտակից ընկեր, որը այժմ, ո գի-
տէ, որտեղ կը գտնուի. թերևս զոհ է եղած ար-
դէն մեր Հայրենիքին մէջ կատարուած սոսկա-
լիկոտորածներուն... Հա, այն պիտի ըսէի, ո-
րովհետեւ դուք՝ թէև իսկական Պարսիկ՝ բայց և
այնպէս խիստ նման էք իմ կորուսեալ ընկերոջ,
—ուստի շատ պիտի սիրեմ զձեզ:

—Շատ շնորհակալ եմ, որ զիս անոր տեղ
ընդունելով՝ կը յարգէք, կը սիրէք, հարկաւ, մար-
դիկ իրար նման կարող են ըլլալ—դա բնական
է, վասն զի մենք ամենքս ալ մէկ երկրի զա-
ւակներն ենք: Ես ալ կը վատահանամ խնդրել
քեզնէ, որ ազնիւ ընկերոջդ անուն շնորհ ընես
ինձի ըսելու. ո գիտէ, աշխարհ է, ինչպէս քե-
զի հետ, այնպէս ալ կարող կլլամ պատահել ա-
նոր հետ:

—Պէտօ:

—Պէտօ և դու նորա ընկերը Սարգիս:

—Այս, ընկերոջս անուն Պէտօ է և իմ ա-
նուն Սարգիս:

—Մահմէտ-Ալի իր տեղէն ցատկելով—ոհն
եղբայր Սարգիս, քո անկեղծ սիրտն ինձի, տա-
րագիր ընկերոջդ կը փնտրէր... Որքան բարի ես
դուն, անկեղծ բարեկամ... ու ուրախութեան

արցունք թափելով՝ գրկախառնուեցան... Երկար, երկար չէին ուղեր բաժանուիլ իրարմէ, արտասունք թափելով՝ իրար ետևէ հարցեր կուտային միմեանց, իրար առողջութիւն կը հարցունէին. եւ այլն, եւ այլն...

Քանի մօր ետքը Սարգիս ստացաւ Պէտօյի Տ. գրած առաջին նամակ, որ նոյնութեամբ, առանց կէտ մը փոխելու, յառաջ կը բերենք ստորեւ: Ահա.—

«1891 թ. Յուլիս 2, Տ...

Հոգիս, եթէ ուրիշն իմ տեղ այնպէս վարուէր, ինչպէս ես քեզ հետ վարուեցի, շատ պիտի նեղանայիր: Սակայն ես հաստատ գիտեմ, որ ինձանից նեղացած չես ըլլար: Դու լաւ գիտէիր իմ դրութիւն: Բոլորովին անյարմար եղաւ այն կողմերն երենալ: Վաղը գուրս կելլամ ուրախ տրամադրութեան տակ, նոր աիրտ առած, բանը շատ յաջող գնաց, նորից նաւակս կը ձըգեմ փոթորկալից ծովին մէջ...

Մնաս բարով, կրկին և կրկին կը համբուրեմ քեզ, կարծես կը նախազգամ, թէ փոթորկալից դէպքեր այլս յաւիտեան չը պիտի թողուն

քեզ պէս շատ սիրելիներու հետ տեսնուելու... Նորից մնաս բարով:

Եւ յուսով եմ, հաւատացած, որ այնպէս կը մնաս ինչպէս որ էիր: Եւ ճիշտ, ազնիւ մարդու համար փոխուելը կատարեալ մահ է: Շնորհակալութիւն կընեմ քո եղբայրական ծառայութիւններուդ համար:

Քո կարօտով լի բարեկամ Պէտօ

Պէտօ վերադառնալով Վան՝ իր փոքրաթիւ, բայց քաջ ընկերներով Վանի 1896 թ. սոսկալի կոտորածի ժամանակ հերոսաբար կը պաշտպանէ Հայ ժողովուրդը և վերջ հերոսական պսակ ընդունելով՝ կը նահատակուի պատերազմի դաշտում գաղանաբարոյ թիւքերէ:

Ո՞հ, որքան ցաւ է մեզ հոս արձանագրել թէ՝ Պէտօյի անմեղ հոգու գուշակութիւնն արդէն կատարուած էր: Նորա մակոյկը փոթորկալից ծովու ահեղ ալիքներին չը դիմանալով՝ վերջ՝ ի վերջոյ կը խորտակուի... Սակայն Պէտօյի անմեղ հոգին այդ ալեաց միջին ես կը միխթարուէր, որ կը մեռնի քաջի նման կոիւ տալով մինչև վերջ:



շահմազգով ոյ մաք Խոյամարտոյի օսքը
կայտուա . Ա ծօթէ վաստ Խողմազգիքց լաց զազ
արտաշար ցի զազատոցն քամունած Գննչուուր
թար մարտառոցն Հզմք և զդի ուխտուն լու և
շար վերազգուար լույսուունուն ցի Խոյմարտուց
մազարանի շողայնամարտ և ուն
մարտառան ուն բան Ե ապ մազու ՀՅ ուր
հա մայթի ութան ուր արու բանու մազու ՀՅ
արդարագի զրայտան ապուն : Ոյ ևս ուզանու մաք
Հզմք Խոյմարտուց մազարանի բան ուխտ ըն
ան մազու Ք օւստան ... ուզանուց ոյ Հզմք զազ
ամենա ցր և ազգան բան քան մայթուուն
խոյս Անդ ման պահ մասնաց ոյ ու ուժուց
ուն մայթուուն ծովու ԱՀ ... Հզմք մազու

ՀՀ Ազգային գրադարան



NL0328991

ԱՍՏՈՒԱԾՈՏՈՒԹՅԱՆ ԲԵԿ-ՅՈՎԱՀԵԱՆԻ

լոյս տեսած աշխատութիւնները.

1. Ուխտ (Ա. Բէլլու-Բէկեան) Փարիզ, 1901. թ.
սպառւած.

2. Ուխտ. Բ. տիպ. Թիֆլիս. 1910 թ. գինն է 20 կ.

3. Հայրենասիրութիւնը իրրե յանցագործութիւն
(Ա. Բէլլու-Բէկեան) Փարիզ, 1903 թ. սպառւած.

4. Մկա վախ չունիմ (Գիւլիստանցի). Թիֆլիս.
1905 թ. գինն է 15 կ.

5. Մեղանչել հմ (թարգմանութիւն ոռւսերէնից)
Թիֆլիս. 1909 թ. հրատ. «Աղբիւր-Տարազի» գինն է
15 կ.

Հեղինակի անտիպ աշխատութիւնները.

6. Երես մը իմ յիշատակարանէ.

7. Բարի ճանապարհ...

8. Արդար դատաստան:

9. Հայկական շարժում:

10. Մնաք բարնվ...

Նրա թարգմանական աշխատութիւնները, որոնք
պէտք է լոյս տեսնեն առանձին զբոյկներով

11. Եղբօր տեղ (տիկ. Ե. Պոլիտկովսկայա-Միխա-
լովայի):

12. Զարեաց արմատը (նոյն գրագիտուհու)

13. Այր Աստուծոյ Միշան (նոյնի)

14. Կալուածքում (տիկ. Դարիա Վիդրէբիսէլիի):

Դիմել Հեղինակին այս հասցեով՝

ЗАКАТАЛЫ Аствацатуръ Бекъ-Овсепянъ, Կամա
Zakataly, Russie Astvatatzatour Bék-Hovsepian.

Գինն է 20 կոդ.